ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 111

19.08.2020թ.

ք. Երևան

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-5/21183-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.5/9004-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/11632-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության 39339-2020 և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության 39339-2020, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.1/6379-2020 և Կադաստրի կոմիտեի ԴՍ/4756-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Վաղատուր բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Տեղ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **0.5 հա** այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 09-090-0110-0001-ից) փոխադրել ջրային հողերի կատեգորիա՝ հիդրոտեխնիկական և ջրատնտեսական այլ օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան